Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի մարզային և Երևանի քաղաքային փուլի 2014թ.

9-10-րդ դասարաններ

1. Երկրագնդի երկրորդ ջրառատ գետ Կոնգոն նավարկելի է առանձին հատվածներում: Ինչո՞վ է դա պայմանավորված: ……..…1
2. Կազմել «պետություն – կառավարման ձև» ճիշտ զույգերը ……...1

1. Բացարձակ միապետություն
2. Հանրապետություն
3. Բրիտանական համագործակցության անդամ երկիր
4. Սահմանադրական միապետություն

ա/ Արգենտինա, բ/ Մոնակո, գ/ Բրունեյ, դ/ Նոր Զելանդիա

3. Նշել Աֆրիկայից 5 երկիր, որոնք դեպի ծով ելք չունեն ……1
4. Երկրի առանցքը, հասարակածը, բևեռային շառավիղը և միջօրեականը դասավորել ըստ երկարությունների նվազող հաջորդականության ……1
5. Հաշվել Ավստրալիա մայրցամաքի ամենաբարձր և ամենացածր կետերի միջև եղած ճնշումների տարբերությունը նույն պահին ……2
6. Լրացնել բաց թողնված բառերը.

   Զանգեզուրի լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը …, որն ունի …մ բարձրություն: Լեռնաշղթայից արևելք ձյուղավորվում են … և … լեռնաբազուկները: ……1
7. Հասարակածով շարժվելիս քանի՞ օրում կարելի է շրջանցել երկրագունդը, եթե մեկ ժամում անցնենք 7 կմ ճանապարհ: Պատասխանը հիմնավորել հաշվարկով: ……...1
8. Ո՞րն է գետի ծախսի և հոսքի տարբերությունը ……..1
9. Ի՞նչ աշխարհագրական օբյեկտներ են նշվածները և որտե՞ղ են գտնվում …..……1

ա/ էլբրուս

բ/ էլբուրս

գ/ էրեբուս

դ/ էրեսուն

10. Ո՞ր պնդումն է ճիշտ. ……1

    Հյուսիսային Ամերիկայի տեղաբնակ ժողովուրդներն են՝

ա/ հնդկացիները, նեգրերը, էսկիմոսները

բ/ հնդկացիները, ալեութները, էսկիմոսները

գ/ հնդկացիները, նեգրերը, ալեութները

11. Նշված կղզի ու կղզեխմբերի և քաղաքների անունները ո՞ր անուններից են առաջացել և որտե՞ղ են գտնվում ……...1

ա/ Նոր Գվինեա

բ/ Նոր Զելանդիա

գ/ Նյու Յորք

դ/ Նոր Օռլեան

12. Դուրս գրել դաշնային պետությունների ճիշտ եռյակը ……1

ա/ Բելգիա, ԱՄԷ, Ավստրիա

բ/ Մալայզիա, Կոլումբիա, Նիգերիա

գ/ Մեքսիկա, Իսպանիա, Մեծ Բրիտանիա

դ/ Լիբիա, Ռուսաստան, Եգիպտոս

13. Նշվածներից առանձնացնել բազմազգ երկիրը. ……..…1

ա/ Իսլանդիա, բ/ Պորտուգալիա, գ/ Նորվեգիա, դ/ Իրան

14. Գետը սկիզբ է առնում 1025 մ բարձրությունից և թափվում լիճ, որը ծովի մակարդակից ցածր է 35 մետրով: Գետի երկարությունը 135 կմ է: Որոշել գետի անկումը և թեքությունը: ……1

15. 5մլն. բնակչություն ունեցող երկրի քաղաքաբնակների թիվը 4մլն. է: Ուրբանիզացման մակարդակը կլինի՝ ……..……..……1

ա/ 75% բ/ 80% գ/ 85% դ/ 90%

16. Ո՞ր պնդումն է ճիշտ. ……..……...……..1

ա/ Ցիկլոններին բնորոշ են քամոտ և տեղումներով եղանակները.

բ/ Գիշերը ցամաքի մակերեսը դանդաղ է սառչում.

գ/ Չմեռային մուսսոնը բնութագրվում է տաք և խոնավ եղանակներով.

դ/ Մթնոլորտային ճնշումների տարբերության գլխավոր պատճառը երկրի մակերևույթի տարբեր տեղամասերի հավասարաչափ տաքանալն է.

17. Ընտրել «գետ – վտակ» ճիշտ զույգը. ……..1

ա/ Դոն - Դնեստր բ/ Վոլգա - Իշիմ

գ/ Դնեպր – Պրիպյատ դ/ Ամուր - Ալդան

18. Լրացնել շարքը համապատասխան մեկ մշակաբույսով. ……...2

ա/ թեյ, սուրճ, …

բ/ բամբակենի, վուշ, …

գ/ ձմերուկ, սեխ, …

դ/ արևածաղիկ, սոյա, …

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Թ.Գրիգորյան

Պատասխաններ

9-10-րդ դասարաններ

1. Կոնգոյի ստորին և միջին հոսանքը բնորոշվում է սահանքներով և ջրվեժներով (Սթենլիի, Լիվինգսթոնի), որոնք խանգարում են նավարկությանը, և դա է պատճառը, որ այն նավարկելի է առանձին հատվածներում:
2. Մոնակո - սահմանադրական միապետություն, Բրունեյ - բացարձակ միապետություն, Արգենտինա - հանրապետություն, Նոր Զելանդիա - բրիտանական համագործակցության անդամ:
3. Զամբիա, Բուրկինա Ֆասո, Չադ, Ռուանդա, Նիգեր, …
4. Հասարակած, միջօրեական, երկրի առանցք, բևեռային շառավիղ:
5. Կոսցյուշկոյի գագաթին ճնշումը կլինի 537.2 մմ սնդիկի սյուն (h=2230 մ), իսկ էյր լճի ափին (h= -16 մ)՝ 761.2 մմ սնդիկի սյուն, տարբերությունը՝ 761.2 - 537.2=224 մմ սնդիկի սյուն:
6. Կապուտջուղ, 3906 (3904), Բարգուշատի, Մեղրու:
7. 238.5 օր, 40076 : 7 = 5725 ժամ, 5725 ժամ : 24 = 238.5 օր:
8. Գետի ծախսը գետի լայնական կտրվածքով 1 վրկ-ում անցած ջրի քանակությունն է՝ Q = SV (Q – ծախս , S – լայնական կտրվածքն է /մ^2/ , V – ջրի արագությունը 1 վրկ-ում): Գետի հոսքը որոշակի ժամանակամիջոցում (օր, ամիս, տարի) գետի կենդանի կտրվածքով անցած ջրի քանակն է: W=QT, որտեղ W - ն հոսքն է, Q - ն ջրի ծախսը, T - ն ժամանակամիջոցը:
9. ա/ լեռնագագաթ Մեծ Կովկասյան լեռնաշղթայում

   բ/ Լեռնաշղթա Հարավ Արևմտյան Ասիայում

   գ/ գործող հրաբուխ Ռոսի կղզում

   դ/ Բալթիկ և Հյուսիսային ծովերը միացնող նեղուցներից:
10. բ/ հնդկացիները, ալեութները, էսկիմոսները:
11. ա/ Գվինեա - պետություն / Աֆրիկա/

    բ/ Զելանդիա - կղզի /Դանիա/

    գ/ Յորք – քաղաք /Մեծ Բրիտանիա/

    դ/ Օռլեան – քաղաք և գետ /Ֆրանսիա/:
12. Բելգիա, ԱՄԷ, Ավստրիա:
13. Իրան:
14. 1110 մ, 8.2 մ/կմ:
15. բ/ 80%:
16. ա/ Ցիկլոններին բնորոշ են քամոտ և տեղումներով եղանակները:
17. գ/ Դնեպր – Պրիպյատ:
18. ա/ կակաո, բ/ սիսալ (ջուտ), գ/ դդում, դ/ ձիթենի (արախիս):

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Թ.Գրիգորյան

Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի մարզային և Երևանի քաղաքային փուլի

2014թ.

11-12-րդ դասարաններ

1. Ի՞նչ է ձյան գիծը: Ինչպե՞ս է փոփոխվում ձյան գիծն ըստ աշխարհագրական լայնությունների: ……2
2. Ինչի՞ է հավասար Արեգակի ճառագայթների անկման անկյունը Երևանում հունիսի 22-ին /պատասխանը հիմնավորել հաշվարկով/ ……1
3. Փամբակի, Ողջիի, Ջորագետի և Արփայի հովիտները դասավորել հարավից հյուսիս ճիշտ հաջորդականությամբ. ……..1
4. Հաշվել Հրազդան գետի միջին թեքությունը: Պատասխանը հիմնավորել հաշվարկով: ……1
5. Նշված գաճաճ պետություններից ո՞րը միապետություն չէ ……..1

   ա/ Անդորրա բ/ Լիխտենշտեյն

   գ/ Մոնակո դ/ Սան- Մարինո
6. Լրացնել բաց թողնված բառերը. ……1

   Իսպանիան պետական կառուցվածքով … պետություն է: Նրա արևելյան ափերը ողողում են … ծովի ջրերը, որտեղ գտնվում է … կղզեխումբը: Մայրաքաղաք Մադրիդի միջով հոսում է … գետը:
7. Որքա՞ն պետք է լինի ՀՀ բնակչության թիվը, որպեսզի միջին խտությունը կազմի 200 մարդ/քառ.կմ: Պատասխանը հիմնավորել հաշվարկով: ……..2
8. Բնակչության ո՞ր տարիքային խումբն է գերիշխում թույլ զարգացած երկրներում և ինչու՞: ……...1
9. Նշել հիմնական և անցումային կլիմայական գոտիների տարբերությունը ……1
10. Ո՞րն է երկրագնդի ամենատեղումնաշատ շրջանը և ինչո՞վ է այն բացատրվում…1
11. Ամենաաղքատ երկրների եռյակ են. ……1

    ա/ Ալբանիա, Թուրքմենիա, Էրիթրեյա

    բ/ Բրունեյ, Մոզամբիկ, Պերու

    գ/ Անգոլա, Մալայզիա, Չադ

    դ/ Հայիթի, Եթովպիա, Աֆղանստան
12. Կազմել «մշակաբույսեր – մշակության մասնագիտացված երկրներ» համապատասխան զույգերը. ……1

ցորեն, եգիպտացորեն, բրինձ, բամբակենի, վուշ, ձիթենի, շաքարի ճակնդեղ, թեյ, համեմունքներ, սուրճ.

Ճապոնիա, Բելառուս, Մյանմա, Ուկրաինա, Մարոկկո, Վիետնամ, ԱՄՆ, Պակիստան, Ֆրանսիա, Ինդոնեզիա

13. Ավելացնել պետությունը ……..1

ա/ Չունցին

բ/ Մեդելին

գ/ Գվադալահարա

դ/ Անտվերպեն

ե/ Կասաբլանկա

14. Նշել այն երկրները, որոնց պատկանում են հետևյալ աշխարհագրական օբյեկտները ……2

ա/ Շպիցբերգեն

բ/ Ազորյան կղզիներ

գ/ Ֆրանց Յոսիֆի երկիր կղզիներ

դ/ Հայնան կղզի

ե/ Մոլուքյան կղզիներ

զ/ Լակադիվյան կղզիներ

է/ Լիպարյան կղզիներ

ը/ Սպորադյան կղզիներ

15. Առանձնացնել այն երկու երկրները, որոնք միաժամանակ մշակում են և շաքարի ճակնդեղ և շաքարեղեգ. ……..1

ա/ Բրազիլիա, բ/ Հնդկաստան, գ/ Չինաստան, դ/ ԱՄՆ, ե/ Ֆրանսիա, զ/ Կուբա

16. Ընտրել մայրաքաղաքների այն խումբը, որտեղ հիմնական կրոնը կաթոլիկությունն է. ……1

ա/ Հռոմ, Բոգոտա, Թբիլիսի

բ/ Մեխիկո, Սեուլ, Մինսկ

գ/ Վարշավա, Փարիզ, Մանիլա

դ/ Սանտյագո, Մադրիդ, Ռիգա

17. Կազմել «պետություն - անասնապահության ճյուղ» համապատասխան զույգերը……1

ա/ ուղտաբուծություն

բ/ ոչխարաբուծություն

գ/ խոզաբուծություն

դ/ ձկնորսություն

1/ Ֆրանսիա, 2/ Սոմալի, 3/ Պերու, 4/ Արգենտինա

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Թ.Գրիգորյան

Պատասխաններ

11-12-րդ դասարաններ

1. Լեռների վրա ձյան գիծը հասարակածի շրջանում 4800-5000 մ բարձրության վրա է, արևադարձային լայնություններում՝ 5500-6000 մ, Հայկական լեռնաշխարհում՝ 4200 մ, բարեխառն լայնություններում՝ 2000-2500 մ, բևեռային շրջաններում՝ ծովի մակարդակին /0մ/: Ձյան գիծը կախված է ոչ միայն ջերմությունից, այլև խոնավությունից: Օրինակ՝ Կովկասյան լեռների արևելյան համեմատաբար չոր կլիմայի պայմաններում ձյան գիծը 4100-4200 մ է, իսկ արևմտյան խոնավ կլիմայի պայմաններում՝ 3500-3600 մ:
2. 90^0 - (40^0 – 23.5^0) = 73.5^0:
3. Ողջի, Արփա, Փամբակ, Ձորագետ:
4. Հրազդանի անկումը՝ 1900 մ (Սևանա լիճ) - 850 մ (Արարտյան դաշտ) = 1050մ, թեքությունը 1050մ : 141 կմ (Հրազդան գետի երկարություն) = 7.4 մ/կմ:
5. դ/ Սան- Մարինո:
6. սահմանադրական միապետություն, Միջերկրական, Բալեարյան, Տախո:
7. 200 մարդ/քառ.կմ x 29800 կմ^2 = 5.960 հազ. մարդ:
8. Մինչաշխատունակ բնակչությունը՝ բնական բարձր աճի շնորհիվ և կյանքի միջին տևողության համեմատաբար ցածր մակարդակով
9. Հիմնական կլիմայական գոտում ամբողջ տարին գերիշխում է մեկ տիպի օդային զանգված, իսկ անցումայինում՝ երկու (հյուսիսային կիսագնդում՝ ցուրտ ժամանակ իրենից հյուսիս, իսկ տաք ժամանակ՝ հարավում տիրապետող օդային զանգվածները: Հարավային կիսագնդում՝ հակառակը):
10. Հիմալայան լեռների հարավային լանջերը, Հնդկաստանի Չերապունջի բնակավայրը, տեղումների տարեկան միջին քանակը՝ 12000 մմ, ինչը պայմանավորված է Հնդկական օվկիանոսից մշտապես փչող պասսատների և մուսսոնների հետ:
11. դ/ Հայիթի, Եթովպիա, Աֆղանստան:
12. Ցորեն – Ֆրանսիա, վուշ - Բելառուս, եգիպտացորեն - ԱՄՆ, բամբակենի – Պակիստան, բրինձ – Վիետնամ, սուրճ - Ինդոնեզիա, համեմունքներ – Մյանմա, թեյ – Ճապոնիա, ձիթենի – Մարոկկո, շաքարի ճակնդեղ – Ուկրաինա:
13. ա/ Չինաստան, բ/ Կոլումբիա, գ/ Մեքսիկա, դ/ Բելգիա, ե/ Մարոկկո:
14. ա/ Նորվեգիա ե/ Ինդոնեզիա
    բ/ Պորտուգալիա զ/ Հնդկաստան
    գ/ Ռուսաստան է/ Իտալիա
    դ/ Չինաստան ը/ Հունաստան

15. Չինաստան, ԱՄՆ:
16. գ/ Վարշավա, Փարիզ, Մանիլա:
17. Սոմալի – ուղտաբուծություն, Պերու – ձկնորսություն, Ֆրանսիա - խոզաբուծություն, Արգենտինա - ոչխարաբուծություն

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Թ.Գրիգորյան